Վ Ճ Ռ Ե Ց

1. «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ պայմանագիրը միակողմանի լուծելու և որպես հետևանք գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Դատարանի 07.08.2023թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը, այն է՝ Երևանի քաղաքապետարանին արգելել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ին ներկայացնել պահանջ՝ թիվ 2365611028 բանկային երաշխիքը վճարելու մասով՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի կայացումը, ինչպես նաև արգելել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ին Պատասխանող Երևանի քաղաքապետարանին վճարել թիվ 2365611028 բանկային երաշխիքի գումարը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի կայացումը՝ պետք է պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

4.Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

5.Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակվելու պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ**